Տաճկաստանի բաժանումը, երբ, որ գլխաւորն է, այդ բաժանումը Անգլիային վերապահեց առիւծի բաժինը, Լոնտոնը լքեց իր արեւելեան դարաւոր քաղաքականութեան հիմնական գիծը ու հրապարակ բերաւ, ընդհակառակը, Տաճկաստանի բաժանման սկզբունքը: Մանաւանդ որ հրապարակի վրայ չկար այլեւս իր մեծ ոսոխը, Ռուսիան, որ ապահովել կարենար իր բաժինը, տաճկական դաթան բաժանելիս: Ու Անգլիան հետապնդեց մի նոր նպատակ — Տաճկաստանի հողերի վրայ, այլ եւ Անդրկովկասում. ստեղծել նոր պետութիւններ ու տարածել նրանց վրայ իր հովանաւորութիւնը եւ ազդեցութիւնը:

Թուաց մի րոպէ, թէ բրիտանական շահերը վերջապէս համերաշխում են հայկականի հետ: Բայց՝ մի րոպէ միայն: Բոլշեւիզմի դրօշի տակ վերականգնած Ռուսաստանը վերստին հարաւ իջաւ, մօտենալով անգլիական ազդեցութեան սահմանները: Հարկաւոր էր ուրեմն, թումբեր կանգնեցնել հիւսիսի կարմրած հեղեղի առջեւ: Պէտք էր նորէն ոտի կեցնել Թուրքիան, յատկացնելով նրան այդ դերը: Ու՝ զինադադարի պայմաններն իսկ Անգլիան Մուդրոսում այնպէս խմբագրեց, որ ապահովուած էր գլխաւորագոյն նախապայմանը Թուրքիոյ վերականգման: Ու ո՛չ մի խօսք նրանում Թուրքիոյ զինաթափման մասին: Ո՛չ մի բառ՝ տաճկահայ հողերը պարպելու մասին: Երկու տարուան միջնարարը — թերեւս նախամտածուած ու չափած ու ձեւած — վերջ դուաւ: Դեռեւի տակից էլ որ լինէր՝ Մուստաֆա Քեմալը լոյս աշխարհ պիտի գար: Անգլիան իր բաժինը ստացել էր արդէն, այդ հերիք էր իրեն: Արարական երկիրները իրենն էին, մնացածի տէրը կարող էր լինել եւ պէտք է մնար Տաճկաստանը: Պէտք էր նրա հողերից հեռու վանել առաջացած ֆրանսական բանակները: Այդպէս էլ եղաւ: Բրիտանական դէնքերով զինուած ու անգլիական դրամով ապահովուած՝ տաճիկ ասկերները, գլուխ ունենալով Քեմալին, նախ եւ առաջ ֆրանսացիներից մաքրեցին ո՛չ միայն Մարաշն ու Ուրֆան, այլ եւ Կիլիկիան: Ներքնապէս խորտակուած իտալացիները կամովին լքեցին իրենց ատալիական ծրագիրը: Անգլիական սաղրանքի առարկայ դարձած յոյները հօ վատօրէն լքուեցան: Նրանցից առաջ էլ՝ հայերը եւ Հայաստան:

Աւելին դեռ: Բախտը անասելիօրէն ժըպտում էր արթնացող Տաճկաստանին: Հոմանիի սիրոյն տենչացող եւրոպուհիները բազմացան մէկ օրէն միւսը եւ ինքզինքին պատրաստակամ նրա գիրկը նետեցին, չխնայելով նրա ուղածը: Ֆրանսա, Իտալիա եւ մանաւանդ բոլշեւիկացած Ռուսաստան՝ իրար ետեւից, մէկդմէկուց առատաձեռն: Մուստաֆա Քեմալի տեղը որ մի պարզ խրտուիլակ էլ լինէր, այդչա՞փ նպաստաւոր պայմաններում ոտի պիտի կանգնեցնէր Տաճկաստանը, թո՛ղ թէ այդ մարդու նման անյոգդողդ կամքի տէր, իր ազգային եւ պատմական առաքելութիւնը լաւագոյն կերպով ըմբռնած մէկը: Ու «հրաշքը» դարձաւ իրականութիւն: Որովհետեւ, նախ եւ առաջ, այդպէս կամեցան ու հաշուեցին պետութիւնները, «մեր մեծ դաշնակիցները»· իրար դաւելով, մէկը միւսի ոտքի տակի հողը վորելով:

Եւ խորհրդայնացած Ռուսիան այն համոզումը կազմեց, որպէս թէ ինքը յաղթանա՞կ տարաւ Անգլիայի դէմ, սանահայրը դառնալով երիտասարդացած Տաճկաստանի: Նա մոռանում է այսօր էլ,— որ ռուսների իսկ ձեռքով Անգլիան իր սեփական ծրագիրներն է հետապնդում: Շատ յաճախ է եղել այդպէս անցեալում, այդպէս է նաեւ՝ ներկայիս: Ինչպէս Տաճկաստանի, այնպէս նաեւ Պարսկաստանի ու Աֆղանիստանի վերաբերմամբ: Ռուսների ձեռքով ու միջոցներով ուժեղացնելով այս վերջին երկիրները, Անգլիան վերջին հաշուով հետեւում է իր աւանդական քաղաքականութեանը — Ասիոյ հարաւի եւ հիւսիսի, բրիտանական եւ ռուսական կալուածների միջեւ ընդարձակ ու բարձր ամբարտակ բարձրացնելով, սկսած Միջերկրականի եղերքից եւ վերջացրած Խաղաղական ովկիանոսով: «Ո՛չ թէ առաջանալ դէպի հիւսիս, դէպի ռուսական հողերը, այլ՝ թոյլ չտալ որ Ռուսաստանը իջնի հարաւ, մօտենայ բրիտանական հողերին» — այս է եղել եւ է այսօր էլ Ֆօրէյն Օֆիսի հիմնական գիծը: Եւ աւելի՞ լաւ խողովակ այդ քաղաքականութեան համար, քան՝ ռուսական փողերով